

# ԱՐՁԱՆԱԳԻՐ ՍԱԼԻՊԷԻ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐՈՒ

*Ս. Քառասնից եկեղեցւոյ ներսը՝*

1.- 1452 ?.— Սբ նշանս բարխս է ՏՐ ՍԱՐԳԻՍ. ԱԲՐԱՀԱՄ, ԳՐԻԳՈՐ։ ՍԱՐԳԻՍԻՆ. ՄԱՐԻԱՄԻՆ. ՄԱՐԱՆ? ՋԱ? (1452?)։ *Լաւ չի կարդացուիր, մաշած ըլլալուն։*

*Ս. Քառասնից եկեղեցւոյ ներսը՝*

2.- 1503 ?.— Սբ նշանս բարխս է ԿԻՐԱԿՈՍԻՆ եւ ի(ր) կենակցուն ԱԲԷԹԻ, որդուն ՈՒՍԷՓԻ, ՀՈՒՓՍԻՄԷ, ՄԱՐԻԱՄ ի թվին ՋԾԲ ? (1503 ?)։ *Թուականը մաշած է և լաւ չի կարդացուիր։*

*Ս. Քառասնից մատուռ-դամբարանին մէջ՝*

3.- 1578.— Այս է տապան հանգուցելոյն, որ հանգեաւ ի Քս ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊՍԿՍՆ. թվն ՌԻԷ (1578). ած ողորմի ասցէ. ամէն։

*Ս. Քառասնից մատրան արտաքին որմին մէջ՝*

4.- 1579.— Սբ խաչս յէս է ՋՈՂՑԻ ՆՈՒՂԱԼԷ որդ ՍԻՄՈՆԻՆ. թվն ՌԻԸ (1579)։

*Նոյնպէս՝*

5.- 1580.— Սբ խաչս բարեխաւս առ Քս ԽԱՒՋԱՑ ՄԱՐՈՒԹԷ հոգուն եւ ծնողցն ՄԵՐԳԻՆՆ ? ՏՐ ԱԹԱՆԻՍԻՆ։ թվկն ՌԻԹ (1580)։

6.- 1587.— *Աջ կողմի սիւնին վրայ կայ նոյնպէս հնագրոշմ խաչքար մը 19 × 18 սնդմ. մեծութեամբ սպիտակ մարմարիոնէ. ունի երկու մաս, երկու խորաքանդակ խաչերով իրարմէ բաժնուած, որոնց տակ կը կարդացուի՝*

Խչս յէս ՋՂՑԻ ԱՂԱՋԱՐԻՆ ՌԼԶ (1578)։

*Եկեղեցւոյ երկրորդ վերաշինութեան (1616) միջոցին, այս խաչքարերը, որոնք հին մասի չրջավայրին մէջ էին անկած, խնամով հիւսուած են արդի տաճարի պատերուն մէջ, կորուստէ փրկելու համար։*

7.- 1587 ?. —*Ս. Քառասնից եկեղեցւոյ ատեանի ձախ սիւնին վրայ կայ հին խաչքար մը, սպիտակ մարմարէ, հայադրոշմ խորաքանդակ եզերային ծաղիկներով (bordure). մէջտեղը 12 × 16 սնդմ. չրջագծի մը մէջ Տիրամայրը՝ գիրկը Յիսուս մանուկով, վրան փորագիր խաչ մը, որուն վարի անկիւններուն մէջ կը կարդացուի՝*

Յէսկ է ՄԱՆՈՒԿԻՆ։

*Նոյնպէս՝*

8.- 1591.— Սբ խաչս յէսկ է ՋՈՂԵՑԻ ՅԱԿՈԲ ԷՐԻՑԻՆ որ եդաւ տապանս այս ... թվ ՌԽ (1591)։

*Նոյնպէս՝*

9.- 1599.— Խչ յէ է ՃՂՑԻ ՅՎՆԻՍԻ որդի ՄԿՐՏՃ. ԱՆԱՆԻ որդի ՆԱԶԱՐԻ ? թվ ՌԽԸ (1599)։